ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 756-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՐՁԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 2-րդ և 3-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 74-Ա որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի և քաղաքացի Գագիկ Գրիշայի Պապյանի միջև 2018 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված հողամասի վարձակալության պայմանագիրը, ***որոշում եմ***՝

1. Ուղղակի վաճառքի ձևով Գագիկ Գրիշայի Պապյանին օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան գյուղական համայնքի սեփականությունը հանդիսացող (սեփականության իրավունքի վկայական՝ 31072018-04-0032, տրված՝ 2018 թվականի հուլիսի 31-ին)՝ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղում գտնվող 04-065-0607-0008 կադաստրային ծածկագրով, 0.9289 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը, հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 1 481 595,50 /մեկ միլիոն չորս հարյուր ութանասունմեկ հազար հինգ հարյուր իննսունհինգ դրամ հիսուն լումա/ Հայաստանի Հանրապետության դրամով:
2. Լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան գյուղական համայնքի և Հայաստանի Հանրապետության քաղաքացի Գագիկ Գրիշայի Պապյանի միջև 2018 թվականի հոկտեմբերի 31-ին Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի «Վաղարշապատ» սպասարկման գրասենյակում կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը:
3. Գագիկ Գրիշայի Պապյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 757-Ա

ԱՐՏԱՎԱԶԴ ՎԱՀԱՆԻ ՇԱԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի հունիսի 16-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հունիսի 29-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023SH7LFP), հողամասի սեփականատեր Արտավազդ Վահանի Շադանյանի 2023 թվականի նոյեմբերի 1-ի N 5049 դիմումը. ***որոշում եմ***՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող Արտավազդ Վահանի Շադանյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0104-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 158,6 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան նկուղը, 210 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկը, 187,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան ձեղնահարկը, 102,2 քառակուսի մետր արտաքին մակերեսով թոչնանոցի առաջին հարկը, 99,3 քառակուսի մետր արտաքին մակերեսով թոչնանոցի երկրորդ հարկը և 3,6 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՋԻՎԱՆ ԱՐՍԵՆԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան առաջին հարկի, ձեղնահարկի և նկուղի համար կազմում է 2316 դրամ, 1 քառակուսի մետր մակերեսով թռչնանոցի առաջին ր երկրորդ հարկերի և պարսպի համար կազմում է 1389,6 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 1 573 860,96 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր վաթսուն դրամ իննսունվեց լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հողամասին և շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Վ. Տերյան փողոց 8 բնակելի տուն (ծածկագիր 040946DAFJEM):

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. դեկտեմբերի 22
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 758-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին օրենքով, ընդունված 2019 թվականի նոյեմբերի 19-ին N ՀՕ-225-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ և Նորակերտ գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի լրամշակված նախագծման առաջադրանքը հաստատելու մասին Նորակերտ գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 15-ի N 2 նիստի թիվ 5 որոշումը, հիմք ընդունելով հողամասի համասեփականատեր Հովհաննես Գրիգորի Սողոմոնյանի և մյուսների 2023 թվականի հոկտեմբերի 20-ի N 4778 դիմումը, ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղում գտնվող՝ Հովհաննես Գրիգորի Սողոմոնյանին, Դավիթ Ռաֆայելի Հակոբյանին և Մարո Ռաֆիկի Հակոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N 05032020-04-0061), 04-074-0126-0027 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 1.1137 հեկտար մակերեսով հողամասը, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը արոտավայր, (կադաստրային արժեքը՝ մեկ քառակուսի մետրի համար 6.7 դրամ) փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիա, որպես հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հող, առևտրի սրահ կառուցելու համար:

2. Փոփոխվող հողի կադաստրային արժեքների տարբերությունը (1 քառակուսի մետր արոտավայրի համար 1871 Հայաստանի Հանրապետության դրամ) 11 137 քառակուսի մետրի համար կազմում է 20 837 327 (քսան միլիոն ութ հարյուր երեսունյոթ հազար երեք հարյուր քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, ինչը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Փարաքարի համայնքային, Նորակերտ բնակավայրի բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության 900325181130 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:

3. Հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Նորակերտ, Նորակերտի խճուղի, 1/1 հողամաս (ծածկագիր 04074ATMFLJM):

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

5. Հետագա կառուցապատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Փարաքար համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:

6.Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. դեկտեմբերի 22

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 759-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին օրենքով, ընդունված 2019 թվականի նոյեմբերի 19-ին N ՀՕ-225-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ և Նորակերտ գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի լրամշակված նախագծման առաջադրանքը հաստատելու մասին Նորակերտ գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 15-ի N 2 նիստի թիվ 5 որոշումը, հիմք ընդունելով հողամասի համասեփականատեր Հովհաննես Գրիգորի Սողոմոնյանի և մյուսների 2023 թվականի հոկտեմբերի 20-ի N 4782 դիմումը, ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղում գտնվող՝ Հովհաննես Գրիգորի Սողոմոնյանին, Դավիթ Ռաֆայելի Հակոբյանին և Մարո Ռաֆիկի Հակոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N 05032020-04-0009), 04-074-0126-0005 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայր, 0.245 հեկտար մակերեսով հողամասի (կադաստրային արժեքը՝ մեկ քառակուսի մետրի համար 6.7 դրամ) նպատակային նշանակությունը փոխել՝ որպես արտադրական օբյեկտների, գործառնական նշանակությունը փոխել՝ որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների:

2. Փոփոխվող հողի կադաստրային արժեքների տարբերությունը (1 քառակուսի մետր արոտավայրի համար 1871 Հայաստանի Հանրապետության դրամ) 2450 քառակուսի մետրի համար կազմում է 4 583 950 (չորս միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար ինը հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, ինչը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Փարաքարի համայնքային, Նորակերտ բնակավայրի բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության 900325181130 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:

3. Հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Նորակերտ, Նորակերտի խճուղի, 1/5 հողամաս (ծածկագիր 04074TFZR2MA):

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

5. Հետագա կառուցապատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Փարաքար համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:

6.Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. դեկտեմբերի 22

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 760-Ա

ՏԻԳՐԱՆ ԱՇՈՏԻ ՂԱՄՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի նոյեմբերի 17-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի նոյեմբերի 17-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023987CU3), հողամասի սեփականատեր Տիգրան Աշոտի Ղամոյանի 2023 թվականի նոյեմբերի 20-ի N 5504 դիմումը. ***որոշում եմ***՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Հ. Ներսիսյան փողոցի 17 հասցեում գտնվող Տիգրան Աշոտի Ղամոյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0042-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 199,3 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան առաջին հարկը, 201,4 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան երկրորդ հարկը, 86,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան ձեղնահարկը, 12,0 քառակուսի մետր արտաքին մակերեսով ջրավազանը, 75,6 քառակուսի մետր մակերեսով ծածկը և 10,6 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՋԻՎԱՆ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան առաջին հարկի, երկրորդ հարկի և ձեղնահարկի համար կազմում է 2316 դրամ, 1 քառակուսի մետր ջրավազանի, ծածկի և պարսպի համար կազմում է 1389,6 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 1 265 740,32 (մեկ միլիոն երկու հարյուր վաթսունհինգ հազար յոթ հարյուր քառասուն դրամ երեսուներկու լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. դեկտեմբերի 22

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 761-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ, 14-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանով հաստատված հավելվածի 9-րդ կետով և հիմք ընդունելով 2023 թվականի դեկտեմբերի 25 -ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով համակարգչում զետեղված թեկնածուների պատահական ընտրության մասին թիվ 1 արձանագրությունը»՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի 2023 թվականի դեկտեմբերի 26-ին թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ անցկացնող մրցութային հանձնաժողովների կազմերը՝ համաձայն հավելվածներ NN 1-2:
2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2023 թ. դեկտեմբերի 25
գ.Փարաքար

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի
2023 թվականի դեկտեմբերի 25-ի
թիվ 761-Ա որոշման

Հանձնաժողովի կազմը

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ ՓՀ-3.1-15)

Լիլիթ Վրեժի Խուդավերդյան
Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի տեղակալ

Անի Գրիգորի Բարսեղյան
Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ

Գևորգ Սպարտակի Գևորգյան
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Աշոտ Գվիդոնի Հովհաննիսյան
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

Զարուհի Ռադիկի Ստեփանյան
Արմավիրի մարզ Փարքար համայնք գյուղ Մերձավան <<Մերձավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն

Գևորգ Լյովայի Խաչատրյան
Փարաքար համայնքի ավագանի

Աշխատակազմի քարտուղար՝ **Գայանե Մանուկյան**

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի
2023 թվականի դեկտեմբերի 25-ի
թիվ 761-Ա որոշման

Հանձնաժողովի կազմը

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության,անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ ՓՀ-3.1-11)

Սուսաննա Դավիթի Դավթյան
Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի տեղակալ

Անի Գրիգորի Բարսեղյան
Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ

Գևորգ Սպարտակի Գևորգյան
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Աշոտ Գվիդոնի Հովհաննիսյան
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

Արմեն Գրիգորի Վեզիրյան
Արմավիրի մարզ Փարաքար համայնք գյուղ Նորակերտ <<Նորակերտի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն

Նեկտար Սիմոնի Սարդարյան
Փարաքար համայնքի ավագանի

Աշխատակազմի քարտուղար՝ **Գայանե Մանուկյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 762-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված 2023 թվականի նոյեմբերի 29-ին «Ջիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից և հողամասի սեփականատեր Սեդա Ղիասյանի 2023 թվականի դեկտեմբերի 20-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի վարչական սահմաններում գնտվող Սեդա Ղիասյանին սեփականության իրավունքով պատկանող 04-030-0004-0017 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (առանձնացվող հատված 1) 0.086 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Բաղրամյան, Հ. Թումանյան փողոց N 29 հողամաս:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (առանձնացվող հատված 2) 0.0926 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Բաղրամյան, Հ. Թումանյան փողոց N 29/1 հողամաս:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. դեկտեմբերի 27
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 763-Ա

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի 1855-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ և հիմք ընդունելով Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Բարեկամության փողոցի 4-րդ բազմաբնակարան շենքի բնակիչների դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Բարեկամության փողոցի 4-րդ բազմաբնակարան շենքի զբաղեցրած 987.6 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամասը փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին անհատույց՝ բաժնային սեփականության իրավունքով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 0.09876 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, հանել համայնքային սեփականության հողերի հաշվեկշռից և ներառել քաղաքացիների սեփականության հողերի հաշվեկշռում:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. դեկտեմբերի 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 764-Ա

ԱՐԵՎՇԱՏ ԱՎԵՏԻՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ԱՐԵԳՆԱԶԱՆ ՄՈՒՐԱԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՀԱՅԿՈՒՇ ԱՐԵՎՇԱՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԵՎ ԳԵՎՈՐԳ ԱՐԵՎՇԱՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը որևէ բացասական կերպով չի ազդում շենքի կրողունակության և սեյսմակայունության վրա, պիտանի է բնականոն շահագործման և վտանգ չի սպառնում մարդկանց կյանքին ու առողջությանը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք հիմք ընդունելով շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը տրված 2023 թվականի նոյեմբերի 10-ին, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 7-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր 2022Z3Y3YJ) և համասեփականատերեր Արևշատ Ավետիսի Գրիգորյանի, Արեգնազան Մուրադի Գրիգորյանի, Հայկուշ Արևշատի Խաչատրյանի և Գևորգ Արևշատի Գրիգորյանի 2023 թվականի դեկտեմբերի 11-ի N 5975 դիմումը. ***որոշում եմ*** '

1. Օրինականացնել Արևշատ Ավետիսի Գրիգորյանին, Արեգնազան Մուրադի Գրիգորյանին, Հայկուշ Արեվշատի Խաչատրյանին և Գևորգ Արեվշատի Գրիգորյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Բարեկամության փողոցի 4-րդ շենքի N 18 բնակարանին կից 35,2 քառակուսի մետր մակերեսով ինքնակամ կցակառույցը, համաձայն «ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ ԳԱԳԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քառակուսու համար՝ 426,6 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 15 016,32 (տասնհինգ հազար տասնվեց դրամ երեսուներկու լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. դեկտեմբերի 20

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 765-Ա

ԱՐՄԻՆԵ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ կետով, 10-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Արմինե Անուշավանի Հովհաննիսյանի 2023 թվականի դեկտեմբերի 15-ի N 6119 դիմումը, ***որոշում եմ***՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Բարեկամության փողոց 2 շենք 1 հասցեում գտնվող՝ Արմինե Անուշավանի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-030-0037-0060-002-026 կադաստրային ծածկագրով 49.3 քառակուսի մետր մակերեսով շինության՝ արտադրամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակարան:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. դեկտեմբերի 28
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 766-Ա

ԽԱՉԻԿ ԱՐԱՐԱՏԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԵՎ ԱՆԻԿ ՀՈՎՍԵՓԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի հոկտեմբերի 13-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 13-ին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 13122021-04-0116 վկայականը, համասեփականատերեր Խաչիկ Արարատի Գալստյանի և Անիկ Հովսեփի Գալստյանի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի N 4763 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղի Վ. Տերյան փողոց թիվ 38 հասցեում գտնվող Խաչիկ Արարատի Գալստյանին և Անիկ Հովսեփի Գալստյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 04-074-0017-0037 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 254,7 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և 25,8 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԿԱՐԵՆ ՄԱՉԱՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինության հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան համար կազմում է 1422 դրամ, 1 քառակուսի մետր կիսակառույցի համար կազմում է 859,2 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 384 350,76 (երեք հարյուր ութանասունչորս հազար երեք հարյուր հիսուն դրամ յոթանասունվեց լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Նորակերտ գյուղի 900325181155 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. դեկտեմբերի 28
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 767-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ, 77-րդ և 78-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 77-Ա, 78-Ա, 79-Ա, 80-Ա, 81-Ա, 82-Ա, 83-Ա, 84-Ա, որոշումները՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից կազմակերպել աճուրդային վաճառք՝ համաձայն թիվ 1 հավելվածով հաստատված ելակետային տվյալների, մեկնարկային գնի, նախավճարի և քայլի չափի:
2. Հաստատել աճուրդային կարգով օտարվող հողամասերի վերաբերյալ հրապարակային ծանուցման տեքստը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված աճուրդով օտարման ենթակա հողամասի հրապարակային ծանուցման հրապարակումը www.azdarar.am Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, մարզպետարանի պաշտոնական կայքէջում, համայնքապետարանի պաշտոնական կայքէջում և զանգվածային լրատվամիջոցներում:
4. Աճուրդային հանձնաժողովին՝ սահմանված կարգով ապահովել աճուրդի անցկացումն ու արդյունքների ամփոփումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2023 թ. դեկտեմբերի 29
գ.Փարաքար

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար
Համայնքի ղեկավարի 2023 թվականի
Դեկտեմբերի 28-ի թիվ 767 որոշման

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/, ծածկագիրը	*Մակերեսը /Հեկտար/*	*Հողամասի Նպատակային և գործառնական նշանակությունը*	*Հողամասի օգտագործման նպատակը*	*Հողամասի նկատմամբ սահմանա-փակումների առկայությունը*	*Ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայությունը*	*Մեկնարկային գինը /դրամ/*
ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Բաղրամյան գյուղ՝ 04-030-0173-0016 կադաստրային ծածկագրով	0,25 հա	Գյուղատնտեսական նպատակային նշանակության	Անասնագոմ կառուցելու համար	-	Ճանապարհ առկա է, ջրատար առկա է, կոյուղի առկա չէ, էլեկտրահաղորդման գիծ առկա է, գազատար առկա չէ	350,000 /երեք հարյուր հիսուն հազար
ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար գյուղ, Թաիրով բնակավայր, Ֆ. Նանսենի փողոց 44/2 հասցեում գտնվող՝ 04-094-0181-0054 կադաստրային ծածկագրով	0,03504 հա	Բնակելի կառուցապատման գործառնական նշանակության	Երկհարկանի բնակելի տուն կառուցելու նպատակով	-	Ճանապարհ առկա է, ջրատար առկա է, կոյուղի առկա չէ, էլեկտրահաղորդման գիծ առկա է, գազատար առկա է	2.628.000 /երկու միլիոն վեց հարյուր քսանութ հազար/
ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար գյուղ, Թաիրով	0,03504 հա	Բնակելի կառուցապատման գործառնական նշանակության	Երկհարկանի բնակելի տուն կառուցելու նպատակով	-	Ճանապարհ առկա է, ջրատար առկա է, կոյուղի առկա չէ, էլեկտրահաղորդման գիծ առկա է,	2.628.000 /երկու միլիոն վեց հարյուր քսանութ/

բնակավայր, Ֆ. Նանսենի փողոց 44/3 հասցեում գտնվող՝ 04-094-0181-0053 կադաստրային ծածկագրով					գազատար առկա է	
ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Նորակերտ բնակավայրում գտնվող՝ 04-074-0107-0156 կադաստրային ծածկագրով	0,9311 հա	Գյուղատնտեսական նպատակային նշանակության		-	Ճանապարհ առկա է, ջրատար առկա է, կոյուղի առկա չէ, էլեկտրահաղորդման գիծ առկա է, գազատար առկա չէ	3.000.000 /երեք միլիոն/
ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Արևաշատ բնակավայրում գտնվող՝ 04-026-0200-0003 կադաստրային ծածկագրով	0.4127 հա	Գյուղատնտեսական նպատակային նշանակության	Գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն կառուցելու նպատակով	-	Ճանապարհ առկա է, ջրատար առկա է, կոյուղի առկա չէ, էլեկտրահաղորդման գիծ առկա է, գազատար առկա չէ	2.063.500 /երկու միլիոն վաթսուներեք հազար հինգ հարյուր/
ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Թաիրով բնակավայր, Կ. Դեմիրճյան թաղամաս 1-ին փողոց,	0.065 հա	Հասարակական կառուցապատման գործառնական նշանակության	Մինչև 3 հարկ հարկայնությամբ բազմաֆունկցիոնալ հասարակական նշանակության օբյեկտ կառուցելու նպատակով	-	Ճանապարհ առկա է, ջրատար առկա է, կոյուղի առկա չէ, էլեկտրահաղորդման գիծ առկա է, գազատար առկա է	5.200.000 /հինգ միլիոն երկու հարյուր հազար/

29 հասցեում գտնվող՝ 04-094-0184-0020 կադաստրային ծածկագրով						
ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Թաիրով բնակավայր, Կ. Դեմիրճյան թաղամաս 1-ին փողոց, 25 հասցեում գտնվող՝ 04-094-0184-0018 կադաստրային ծածկագրով	0.066 հա	Հասարակական կառուցապատման գործառնական նշանակության	Մինչև 3 հարկ հարկայնությամբ բազմաֆունկցիոնալ հասարակական նշանակության օբյեկտ կառուցելու նպատակով	-	Ճանապարհ առկա է, ջրատար առկա է, կոյուղի առկա չէ, էլեկտրահաղորդման գիծ առկա է, գազատար առկա է	5.280.000 /հինգ միլիոն երու հարյուր ութսուն հազար/
ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Թաիրով բնակավայր, Կ. Դեմիրճյան թաղամաս 1-ին փողոց, 27 հասցեում գտնվող՝ 04-094-0184-0019 կադաստրային ծածկագրով	0.066 հա	Հասարակական կառուցապատման գործառնական նշանակության	Մինչև 3 հարկ հարկայնությամբ բազմաֆունկցիոնալ հասարակական նշանակության օբյեկ կառուցելու նպատակ	-	Ճանապարհ առկա է, ջրատար առկա է, կոյուղի առկա չէ, էլեկտրահաղորդման գիծ առկա է, գազատար առկա է	5.280.000 /հինգ միլիոն երու հարյուր ութսուն հազար/

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար
Համայնքի ղեկավարի 2023 թվականի
Դեկտեմբերի 28-ի թիվ 767 որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի դասական աճուրդ: ԼՈՏ 1- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 27062023-04-0072, տրված՝ 2023 թվականի հունիսի 27-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղում գտնվող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից՝ 04-030-0173-0016 կադաստրային ծածկագրով, 0.25 հա մակերեսով այլ հողատեսք գործառնական նշանակության հողամաս: /այսուհետ՝ Գույք/: Աճուրդի ծածկագիրն է՝ ԳԱ 01-24: Աճուրդի մեկնարկային գին է սահմանվում ընդհանուր՝ 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ: Աճուրդը կայանալու է 2024 թվականի հունվարի 29-ին ժամը 12:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի շենքում: .Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2024 թվականի հունվարի 24-ը, ժամը 18:00-ն:

ԼՈՏ 2- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 28062023-04-0068, տրված՝ 2023 թվականի հունիսի 28-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի գյուղ Փարաքար, գ. Թաիրով Ֆ. Նանսենի փողոց 44/2 հասցեում գտնվող՝ բնակավայրերի նպատակային նշանակության, 04-094-0181-0054 կադաստրային ծածկագրով, 0.03504 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս, /այսուհետ՝ Գույք/ երկհարկանի բնակելի տուն կառուցելու նպատակով, որից 140,16 քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ կառուցապատման, իսկ 165,24 քառակուսի մետր մակերեսով հողամասը կանաչապատման համար: Աճուրդի մեկնարկային գին է սահմանվում ընդհանուր՝ 2 628 000 /երկու միլիոն վեց հարյուր քսանութ հազար/ ՀՀ դրամ: Աճուրդի ծածկագիրն է՝ ԳԱ 02-24: .Աճուրդը կայանալու է 2024 թվականի հունվարի 30-ին ժամը 12:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի շենքում: Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2024 թվականի հունվարի 25-ը, ժամը 18:00-ն:

ԼՈՏ 3- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 28062023-04-0043, տրված՝ 2023 թվականի հունիսի 28-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի գյուղ Փարաքար, գ. Թաիրով Ֆ. Նանսենի փողոց 44/3 հասցեում գտնվող՝ բնակավայրերի նպատակային նշանակության, 04-094-0181-0053 կադաստրային ծածկագրով, 0.03504 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս, /այսուհետ՝ Գույք/ երկհարկանի բնակելի տուն կառուցելու նպատակով, որից 140,16 քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ կառուցապատման, իսկ 165,24 քառակուսի մետր մակերեսով հողամասը կանաչապատման համար: Աճուրդի մեկնարկային գին է սահմանվում ընդհանուր՝ 2 628 000 /երկու միլիոն վեց հարյուր քսանութ հազար/ ՀՀ դրամ: Աճուրդի ծածկագիրն է՝ ԳԱ 03-24: .Աճուրդը կայանալու է 2024 թվականի հունվարի 31-ին ժամը 12:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի շենքում: .Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2024 թվականի հունվարի 26-ը, ժամը 18:00-ն:

ԼՈՏ 4- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 19092023-04-0004, տրված՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի Նորակերտ գյուղում գտնվող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից՝ 04-074-0107-0156 կադաստրային ծածկագրով, 0.9311 հա մակերեսով այլ հողատեսք, վարելահող /0,8735 հա մակերեսով հողամասը՝ այլ, իսկ 0,0576 հա մակերեսով հողամասը՝ վարելահող/ գործառնական նշանակության հողամաս /այսուհետ՝ Գույք/: Աճուրդի ծածկագիրն է՝ ԳԱ 04-24: Աճուրդի մեկնարկային գին է սահմանվում ընդհանուր՝ 3000 000 / երեք միլիոն/ ՀՀ դրամ: Աճուրդը կայանալու է 2024 թվականի փետրվարի 1-ին ժամը 12:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի շենքում: Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2024 թվականի հունվարի 29-ը, ժամը 18:00-ն:

ԼՈՏ 5- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 25092023-04-0028, տրված՝ 2023 թվականի սեպտեմբերի 25-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի Արևաշատ գյուղում գտնվող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից՝ 04-026-0200-0003 կադաստրային ծածկագրով, 0.4127 հա մակերեսով այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասն /այսուհետ՝ Գույք/, գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն կառուցելու նպատակով: Աճուրդի մեկնարկային գին է սահմանվում ընդհանուր՝ 2 063 500 /երկու միլիոն վաթսուներեք հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ: Աճուրդի ծածկագիրն է՝ ԳԱ 05-24: Աճուրդը կայանալու է 2024 թվականի փետրվարի 2-ին ժամը 12:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի շենքում: Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2024 թվականի հունվարի 30-ը, ժամը 18:00-ն:

ԼՈՏ 6- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 15092021-04-0020, տրված՝ 2021 թվականի սեպտեմբերի 15-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի գյուղ Թաիրով, Կ. Դեմիրճյան թաղամաս 1-ին փողոց 27 հասցեում գտնվող՝ բնակավայրերի նպատակային նշանակության՝ 04-094-0184-0019 կադաստրային ծածկագրով, 0.066 հա մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն, մինչև 3 հարկ հարկայնությամբ բազմաֆունկցիոնալ հասարակական նշանակության օբյեկտ կառուցելու նպատակով, որից 528,0 քառակուսի մետր մակերեսով հողամասը կառուցապատման, իսկ 132,0 քառակուսի մետրը՝ կանաչապատման համար: Աճուրդի մեկնարկային գին սահմանել ընդհանուր՝ 5280000 /հինգ միլիոն երկու հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ: : Աճուրդի ծածկագիրն է՝ ԳԱ 06-24: Աճուրդը կայանալու է 2024 թվականի փետրվարի 5-ին ժամը 12:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի շենքում: Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2024 թվականի հունվարի 31-ը, ժամը 18:00-ն:

ԼՈՏ 7- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 15092021-04-0053, տրված՝ 2021 թվականի սեպտեմբերի 15-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի գյուղ Թաիրով, Կ. Դեմիրճյան թաղամաս 1-ին փողոց 25 հասցեում գտնվող՝ բնակավայրերի նպատակային նշանակության՝ 04-094-0184-0018 կադաստրային ծածկագրով, 0.066 հա մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն օտարել աճուրդային եղանակով, մինչև 3 հարկ հարկայնությամբ բազմաֆունկցիոնալ

հասարակական նշանակության օբյեկտ կառուցելու նպատակով, որից 528,0 քառակուսի մետր մակերեսով հողամասը կառուցապատման, իսկ 132,0 քառակուսի մետրը՝ կանաչապատման համար: Աճուրդի մեկնարկային գին սահմանել ընդհանուր՝ 5280000 /հինգ միլիոն երկու հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ: Աճուրդի ծածկագիրն է՝ ԳԱ 07-24: Աճուրդը կայանալու է 2024 թվականի փետրվարի 6-ին ժամը 12:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի շենքում: Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2024 թվականի փետրվարի 1-ը, ժամը 18:00-ն:

ԼՈՏ 8- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 15092021-04-0016, տրված՝ 2021 թվականի սեպտեմբերի 15-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի գյուղ Թաիրով, Կ. Դեմիրճյան թաղամաս 1-ին փողոց 29 հասցեում գտնվող՝ բնակավայրերի նպատակային նշանակության՝ 04-094-0184-0020 կադաստրային ծածկագրով, 0.065 հա մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մինչև 3 հարկ հարկայնությամբ բազմաֆունկցիոնալ հասարակական նշանակության օբյեկտ կառուցելու նպատակով, որից 520,0 քառակուսի մետր մակերեսով հողամասը կառուցապատման, իսկ 130,0 քառակուսի մետրը՝ կանաչապատման համար: Աճուրդի ծածկագիրն է՝ ԳԱ 08-24: Աճուրդի մեկնարկային գին սահմանել ընդհանուր՝ 5200000 /հինգ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ: Աճուրդը կայանալու է 2024 թվականի փետրվարի 7-ին ժամը 12:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի շենքում: Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2024 թվականի փետրվարի 2-ը, ժամը 18:00-ն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում՝ հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Փարաքար, Նաիրի 42:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք: Աճուրդի նախավճարի չափը կազմում է աճուրդի առարկայի մեկնարկային գնի 50 տոկոսը:

Քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Աճուրդում հաղթող կճանաչվի առավելագույն գին առաջարկողը:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտ նրկայացնելու համար դիմել ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարան /ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքարի համայնք, գ. Փարաքար, Նաիրի 42, 1-ին հարկ, քաղաքաշինության և հողաշինության բաժին/: